Ուսումնական նախագիծ

Առարկա՝ Ռուսաց լեզու

Ուսումնական նախագծի անվանում՝ *«Մի ազգանվան պատմություն»*

Նախագծի ղեկավար՝ *Աստղիկ Սրապյան*

Դասարան՝ 7-րդ

Տևողությունը՝ 13.11.2023 – 18.11.2023 /6 շաբաթ/

Նախագծի նպատակը՝

- *սովորողների մոտ ձևավորել իր ազգային մշակույթը, արմատները ճանաչելու և արժևորելու կարողություն, զարգացնել սովորողի ինքնագիտակցությունն ու ազգային արժանապատվությունը, կարևորել ընտանեկան ավանդույթներն ու արժեքները*
- *սովորողի մոտ զարգացնել սոցիալական փորձն ու հմտությունները, հետազոտելու փորձառությունը, համադրելու տարբեր գործիքակազմեր*
- *յուրացնել սեփական ընտանիքի ստեղծման և զարգացման պատմությունը, ըմբռնել «ընտանիք», «նախնի», «տոհմ» հասկացությունների իմաստը*
- *հանդես գալ ռուսաց լեզվով, կարողանալ գրագետ բանավոր խոսքով ներկայացնել, վերլուծել, համադրել տարբեր աղբյուրներից ստացած տեղեկությունները*

Նախագծի հիմնախնդիրը՝ *Ի՞նչ դեր ունի ընտանիքը*

Նախագծի նկարագիրը՝ *Յուրաքանչյուր սովորող զբաղվում է հետազոտական աշխատանքով, ուսումնասիրում, ծնողներից, հարազատներից տեղեկություններ է հավաքում իր ազգանվան ծագման, նախնիների մասին: Գծում է/նկարում/ տոհմածառը : Պարզում է՝ որտեղի՞ց են իր արմատները, ազգանվան մասին հետաքրքիր պատմություն և ստուգաբանությունն է իմանում: Այս ամենը ներկայացվում է ռուսերեն պատումի կամ վիդեո տարբերակով*